

ՀԱՅԶԱԽԱԿ

ՀԱՅՐԵՆԱԴԱԻԵՐՈՒ
ՆՈՐ ԱՐՇԱԽԱՆՔԸ
ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՒՆ ԴԷՄ

A II
80225



1949 — ՀԱԼԷՊ (Սուրիա)

24

329.14/47.925/ 570

2-24

ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՀԱՅԿԱՆԱԳԱՐԱՆԻ ՀԱՄԱՐԱՆԱԾԻ

ՎԱՆՔՑ

32914(47500)

(473.28)

In-

2-24

ԹՇՆԱՄԻՆ Կ'ԱԾԽԱՏԻ ՀԱՅՈՒ ՁԵՌՔՈՎ ԻՐԱԳՈՐԾԵԼ ԻՐ ՀԱԿԱՀԱՅ ԾՐԱԳԻՐՆԵՐԸ

Չտրաշուք դաւադրութիւն մը տակաւ թափ կ'առնէ զոլթահայտութեան և յատկապէս Մերձաւոր-Արեւելքի մէջ, Հայ Առաքելական Մայր-Եկեղեցիին դէմ:

Միջազգային և մասնաւորապէս արաբական երկիրներու քաղաքական կացութեան մէջ յառաջ եկած կարգ մը մամանակաւոր մութ երեւոյթներէն մտիթ քաղելով, դաշնակցական մամուլն ու զեկաւարները վերսկսած են սուտի, նենգութեան և չափածի վրայ հիմնուած սինտանձ արշաւ մը: Այս արշաւը ուղղուած է էջմիածնի Ընդհանուր Հայրապետութեան և Կիլիկիոյ կաթողիկոսութեան Աթոռներուն և հայ եկեղեցւոյ միասնականութեան դէմ: Շնորհալիներու, Աշտարակեցիներու և Խրիմեան Հայրիկներու արժանաւոր յաջորդ, մեծանուն ու լուսամբա եկեղեցական, իմաստուն և հայրենասէր Վահագն Հայրապետներ, Դէորդ Զ. Զէօրէքեանի և Գարեգին Ա. Եղեղեղեանցի դէմ, որոնք ընտրուած են Հայրենիքի և Սփիւռքի հաւատացեալ ամբողջ հայութեան լոխ միաձայնութեամբ: Անիկա ուղղուած է Մայր-Հայրենիքին և հայրենասէր բոլոր հայերուն դէմ անխտիր:

Դաշնակցական մամուլին և զեկաւարներուն այս արշաւը ներշնչուած և թելադրուած է թշնամի օտարէն, կը յենու անոր աջակցութեան և մեր ազգային կեանքէն ներս կատարած ապօրինի ու բռնապետական միջամտութիւններուն վրայ:

Սատանայածին թշնամին կ'աշխատի հայու ձեռքով և հայու մեղսակցութեամբ իրաւորներէն իր հակահայ ծրագիրները:

52208



ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ՄԱՅՐ—ԵԿԵՂԵՑԻՆ ԱՅՍՈՐ ԱԿԵԼԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԱԾ ԵՒ ՓԱՅԼՈՒՆ ՎԻՃԱԿ ՈՒՆԻ

Հակառակ դաշնակցական մամուլին և պրոպականտիստներուն արձակած վայնասիններուն, Հայաստանեայց Մայր—Եկեղեցին այսօր աւելի կազմակերպուած է և աւելի փայլուն վիճակ մը ունի:

Արդարեւ, էջմիածնի և Կիլիկիոյ Հայրապետական Աթոռները օգտուած են այնպիսի մեծարժէք դահակալներով, որոնց շունչի և ղեկավարութեան տակ, այդ Աթոռները այսօր դարձած են հեղինակաւոր կեդրոններ՝ ազգային, եկեղեցական, մշակութային և հոգեկան շինարարութեանց ու հայ ժողովուրդի ազգային հայ, ենթահերական ան սասան միասնականութեան:

Էջմիածնի Հայրապետական Աթոռին բազմած Գեորգ Զ. Զեօրէքճեան վեհափառը տէր է բարձրագոյն ուսումի. աւարտած է Լայպցիկի համալսարանին աստուածաբանական-փիլիսոփայական ֆակուլտար և երաժշտանոցը. ունի վաթսուէն տարուայ ազգային ներսիս եկեղեցական կեանք մը: Արդէն 1918 թ.ին, Ան ստանձնած էր Ամենայն Հայոց Կ. թողիկոսի տեղապահի պաշտօնը՝ վարձածակ յուստհագի իմ րէն Ա. Մուրադէկեան կաթողիկոսի յատուկ կառավար:

Զեօրէքճեան իմ փառը կը շարունակէ մեր պատմութեան մեծանուն հրատարակչուն յուստհագ խմբին երը. Ան Հայ Եկեղեցիին մեծութեանն ու ապահովութեանը կը տեսնէ հայրենիքի մեծութեան և ապահովութեան, հայ պատմութեան ամբողջին և հայրենիքին և իր ժողովուրդին հետ եկեղեցիին անխցելի միասնականութեան մէջ: Ահա թէ ինչու, հայրենական պատերազմի ժամանակ Էջմիածնի թուրք հաւատակարար հայերուն ուղղած իր կոչումով ու կ'նպ. կներով Ան ակաթիօրէն մասնակցեցաւ հայրենիքի պաշտպանութեան սրբազան գործին, կազմակերպեց Մասունցի Գաւիթի տնտեսութեան թանգարանի հանդիսականութեան, եղաւ ազգամտականերու վրայ և այսօր իր հպարտութեան վրայ Քրիստոսի խաչին հետ կը կրէ Յաղթանակի շքանշանը, Վերջին անգամ պաշտպանութեան համար մեծարժէք մեծարար Մինչդեռ, դաշնակներու արքայականութեան յաւաք

բերած աւերակներուն և յուսախաբուած իւններուն ի տես, «վախ-
ճաննալ Գէորգ Ե. տխրալիօրէն կը ստորագրէր՝ «վշտակիր կաթո-
ղիկոս», և կարսի մէջ, թրքական բանակին գլխիկոր կը ներկա-
յանար Գարեգին վարդապետը (այժմու կիլիկիոյ վեհափառը),
անոր յանձնելու համար քաղաքին բանալիները, և ստուգ ջարդէ
փրկելու համար անմեղ ժողովուրդը, զոր դաշնակ զեկավարները
լքած ու փախուստի դիմած էին՝ իրենց կաշիները փրկելու հա-
մար: Արդարեւ, էջմիածնի ներկայ գահակալը, շնորհիւ ներկայ
Հայաստանի, յաղթական հայրենիք և ամրակուռ պետութիւն ու-
նեցող ժողովուրդի մը Հայրապետն է: Անոր ձայնը այժմ հեղինա-
կաւոր ու ազդու կը հնչէ, ինչպէս Մայր—Հայրենիքին ձայնը:

Զէօրէքճեան վեհափառին զեկավարութեան տակ, Հայաս-
տանեայց Եկեղեցին, իր Մայր—Աթոռով, դարձաւ համաշխարհային
յարգանքի առարկայ և քրիստոնէական միւս հարազատ եկեղեցի-
ներուն հետ հաւատարմօրէն միասին պատուոյ տեղ ստացաւ՝
աշխարհի ժողովուրդներուն միջեւ խաղաղութեան և սիրոյ յարա-
բերութիւններ ստեղծելու աիեղերական գործին մէջ:

Զէօրէքճեան վեհափառի զեկավարութեան տակ ամրապէս
կազմակերպուեցաւ և բարգաւաճումի նոր հունի մէջ մտաւ էջ-
միածնի Մայր—Աթոռը: Տարիներէ ի վեր կանոնաւորապէս լոյս կը
տեսնէ Աթոռի պաշտօնական օրկան՝ «Էջմիածին» ամսագիրը,
հարուստ բովանդակութեամբ և շքեղ տպագրութեամբ. բացուե-
ցաւ հոգեւոր ճեմարանը, որ «գիշերօթիկ դպրոց է և սովորողնե-
րուն կուտայ ձրի կրթութիւն և ամէն յարմարութիւն (սնունդ,
աւկոյիս, հագուստ, գրեհական պիտոյքներ)» («Էջմիածին», Յու-
լիս—Օգոստոս—Սեպտեմբեր, 1948 թ. էջ՝ 104):

Իրական հաւատացեալներու հոգեկան երջանկութեան վայր
դարձած է Մայր—Տաճարը, որուն ընդարձակ փակը, դաշնակցե-
րու օրով վերածուած էր տխուր դերեղմաննոցի մը՝ քոլէրայի,
թիֆոյի, թիֆուսի, այլ համաճարակ հիւանդութիւններու և
սովի հետեւանքով մահացող հազարաւոր և հազարաւոր հայ գաղ-
թականներուն համար:

Ահաւաստիկ քանի մը նօթեր Մայր—Տաճարի կեանքէն՝ քա-
ղուած «Էջմիածին» ամսագրի վերոյիշեալ թիւէն. —

«Օգոստոս Եին Մայր—Աթոռ այցելեց Լատվիայի պիոներներ-
րու մի մեծ խումբ: Պիոներները մեծ հետաքրքրութեամբ տաճա-
րը ու անոր կից թանգարանը դիտելէ և իրենց յուշատետրերուն

մէջ գրանցումներ ընելէ վերջ վերադարձան Երեւան: Թէ Տաճարին և թէ Թանգարանին մէջ պիտոններնուն բացատրութիւն կուտար Թանգարանապետ Տ. Սահակ ծայրագոյն վարդապետ:»

«Օգոստոս 15ին, Վերափոխման Տօնի օրը, Մայր—Տաճարի մէջ հանդիսաւոր Ս. Պատարագ մատուցուեցաւ: Ս. պատարագին ներկայ էր Վեհափառ Հայրապետը: Կը պատարագէր Գեր. Տ. Կարապետ եպիսկոպոսը, որը յաւուր պատշաճի քարոզ խօսեցաւ Տաճարը լիքն էր երկսեռ բազմութեամբ»:

«Սեպտեմբեր 12ին, Խաչվերացի տօնին, Մայր—Տաճարի մէջ Ս. պատարագ մատուցուեցաւ: Ս. պատարագին ներկայ էր Վեհափառ Հայրապետը: Կը պատարագէր Գերապատիւ Տ. Սուրէն եպիսկոպոսը: Յաւուր պատշաճի քարոզ խօսեցաւ Տ. Կարապետ եպիսկոպոսը: Վեհափառ Հայրապետի հանդիսադրութեամբ և հոծ բազմութեան ներկայութեամբ երեկոյեան Մայր—Տաճարի շուրջը կատարուեցաւ խաչվերացի թափօրը»:

«Սեպտեմբեր 25ին, Ս. Գէորգայ տօնին և Վեհափառ Հայրապետի անուանակոչութեան տօնին օրը, վեհարանին մէջ ընդունելութիւն—հիւրասիրութիւն մը տեղի ունեցաւ: Հիւրերը իրենց բաժակաճառերով առողջութիւն ու արեւշատութիւն մաղթեցին ծերունազարդ կորովի Վեհափառ Հայրապետին և մեծ գահունակութեամբ ունկնդրեցին Վեհափառ Հայրապետին խրատական ու իմաստալից խօսքերը»:

«Սեպտեմբեր 29ին Երեւանէն Մայր—Աթոռ ժամանեցին ֆիզիոլոկներու, բիոքիմիկոսներու և ֆարմալոկներու անդրկողկասեան համագումարի (Երեւանի մէջ) մի խումբ մասնակիցներ, որոնց թուին Հայաստանի, Վրաստանի ու Ադրբեջանի մի շարք ակադեմիկոս գիտնականներ: Փղբայրական երեք ուստուպիկաներու գիտնականները մանրամասն դիտեցին Տաճարն ու անոր կից Թանգարանը: Այցելուներուն ռուսերէն լեզուով բացատրութիւն կուտար լսարանապետ Տ. Սահակ ծայրագոյն վարդապետը: Այցելուները ցանկութիւն յայտնեցին տեսնուելու Վեհափառ Հայ-

րապետի հետ: Վեհի հաճութիւնն ստանալէ յետոյ, այցելունի ր Տ. Սահակ ծայրագոյն վարդապետի առաջնորդութեամբ վեհարանում ներկայացան վեհափառ Հայրապետին: Այնուհետեւ Մաղկեայ Դահլիճն ու վեհարանը դիտելէ յետոյ, անոնք հրաժեշտ առին վեհափառ Հայրապետէն ու ժեկնեցան իրեւան»: Լն. Լն. Լն.

Չէօրէքճեան վեհափառի հայրական իմաստուն և հեղինակաւոր դեկավարութեան տակ կազմակերպուեցան և աւելի պայծառացան Հայ Եկեղեցւոյ թեմերը՝ ոչ միայն Սովետական սահմաններէն և ժողովրդական դեմոկրատիայի երկիրներէն ներս, այլ նաեւ անոնցմէ դուրս՝ բովանդակ Սփիւռքի մէջ: Այսօր իրենց թեմերը ձեռնհասօրէն կը ղեկավարեն բարձրաստիճան կարող և հայրենասէր եկեղեցականներ, ինչպէս Ֆրանսայի մէջ՝ Արտաւազդ Արքեպիսկոս Սիւրմէեան, Հաբաւայի Ամերիկայի մէջ՝ Գարեգին Արքեպիսկոպոս Այաջատուրեան, Եգիպտոսի մէջ՝ Մամբրէ Արքեպիսկոպոս Սիրունեան, Երուսաղէմի մէջ՝ Պատրիարք Կիւրեղ եպիսկոպոս, Միացեալ Նահանգներու մէջ՝ Երսոյեան և Իրանի մէջ Իրամբեան եպիսկոպոսները և ուրիշներ: Չէօրէքճեան վեհափառի օրով էր որ իջմիածնի Ընդհանուր Հայրապետական և Կիլիկիոյ Հայրապետական Աթոռներուն միջեւ ստեղծուած դարերու թիւրիմացութիւնները վերջնականապէս և ամբողջութեամբ անհետացան և ստեղծուեցաւ եկեղեցական սերտ միութիւն մը, ի պայծառութիւն և ի զօրացում Հայաստանեայց Մայր-Եկեղեցիին:

Այսօր աւելի քան երբեք, բովանդակ Սփիւռքի հաւատացեալ հայութիւնը միահամուռ սիրով, յայդանքով և հաւատքով իր դէմքը դարձուցած է դէպի «հայութեան միակ վատիկան», դէպի Չէօրէքճեան մեծանուն վեհափառի Հայրապետութեան տակ փայլող Ս. Իջմիածնի լուսաւորչաճիւմ Մայր-Աթոռը: Անոր տանեւ վեհօրէքճեան դարերու հին սուրբ Ս. Տաճարը չըջապօտուած Ս. Գայեանէի, Ս. Հռիփսիմեանց կոյսերու նոյնպէս հինաւորց տաճարներով, Շողակաթի բազմադարեան մատուռով և պատմական Զուարթնոցով:

Իսկ Իջմիածնէն վերջ, Հայաստանեայց Եկեղեցիին ամենէն ամբափուռ սիւնն է Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը, որուն համար պատմական խիստ մեծ պարծանք և բարեբախտութիւն մըն է իր Աթոռին վրայ ունենալ Գարեգին Ա. Յովսէփեանցի պէս մեծանուն Գահակալ մը: Արդարեւ, 60 ամեայ ազդային եկեղեցական

արդիւնաւոր և անբասիր կեանք ապրած, անստան հաւատքով մը իր եկեղեցիին և ժողովրդին նուիրուած Յ4 ամեայ քայքայուած և անկաշկերտ պատկառելի Հայրապետ մըն է Գարեգին Ա. Կաթողիկոս։ Ռազմաճակատներու վրայ վտանգներն անգոսնոր քաջ հովուապետ մըն է Ան։ Հայկական մշակոյթի հնազիւտ և հազուադիւտ նշխարներն ու թաղուած և մոռցուած մեծարժէք կոթողները երեւան հանող, արժէքաւորող և ժողովուրդին սեփականութիւնը դարձնող հայ մեծ և վաստակաւոր և գիտնական մըն է Կիլիկիոյ աթմու Հայրապետը։ Իւնեսքոյի Պէյրուի զուամրուած ժողովին առթիւ Անոր կազմակերպած հայ հնազիւտական ցուցահանդէսը արդար հպարտութեամբ լեցուց հայուն — սիրտը և աւելի բարձրացուց Կիլիկիան Աթոռին անունը։ Հայրենադարձի պատմական մեծ գործին, թրքահայ բռնագրաւեալ հողերու Մայր—Հայրենիքին վերամիաւորման ազգային արդար դատին ծառայող մեծ հայ մը և մեծ հեղինակութիւն մըն է Ան։ Իր օրով և իր ղեկավարութեամբ, աւելի եւս սերտացան Կիլիկիան և Էջմիածնի լնդհ, Հայրապետական Աթոռներուն և հետեւաբար ամբողջ Հայաստանայց եկեղեցիին ազգայնօրէն մշտապէս երազուած միասնականութիւնը։ Անոր ջանքերով, ղեկավարութեամբ և Անոր շունչին տակ, Կիլիկիոյ կաթողիկոսարանը դարձած է բարձր աստիճանի հոգեկան և մշակութային լուսաւոր օճախ մը և հայրենասէր հայութեան միահամուռ սիրոյն և յարգանքին արժանացած ազգային կեդրոն մը։ Անոր հայրական հովանիին և շունչին տակ ու իր ջանքերով հոս հաւաքուած է արժէքաւոր, փորձառու և վաստակաւոր մշակներու ընտիր հոյ մը և դպրեւանքը դարձած աւելի պտղատու և տիրացած է կրթական աւելի բարձր մակարդակի։ Շնորհիւ Վեհ. Գարեգին Ա. Յովսէփեանց կաթողիկոսի, անոր հայթայթած միջոցներուն, անոր նախաձեռնութեան, հեղինակութեան և հմայքին, անբաղդատելիօրէն աւելցած են Աթոռին նիւթական միջոցներն ու հասոյթի աղբիւրները։ Լիւրի ապահովուած է կաթողիկոսարանին և դպրեւանքին պիւտճէն. վանքապատկան հասութեաբեր կալուածներուն վրայ աւելցած է ճարեագին Ա. Յովսէփեանց կտակը — բազմայարկանի նոր շէնք մը Պէյրութի նորակերտ թաղերէն մէկուն մէջ — և նոյնպիսի երկրորդ շէնք մըն ալ աւելնալու վրայ է նոյն կտակին վրայ։

Տակաւին վերջերս, Դերենիկ եպիսկոպոսը, վեհափառին անունով, կաթողիկոսարանին և դպրեւանքին համար Ամերիկայէն

տպահովեց կէս միլիոն ռսկի արժէքով զանազան նպատակներ:

Ճոխ բովանդակութեամբ և կոնսուաւորացէս կը հրատարակուի կաթողիկոսարանի օրկան «Հասկ»ը, իսկ վանքին տպարանը ձեռնարկած է վեհափառի 60 տմեայ գիտական պրպտումներուն և աշխատութեանց արգիւնք՝ 12 հատոր գիրքերու հրատարակութեան:

Ասկայն այս բոլորը չարամտօրէն կ'ուրանտն դաշնակ թերթերու խմբագիրներն ու ղեկավարները: Թրքարարոյ և թրքահպատակ Անգարացի Մինաս Թէօլէօլեանի պէս թղուկներն ու իր նմանները, իրենց ախուր բաղձանքներն արդէն իրականութեան վերածուած և իրենց քայքայիչ դաւադիր ջանքերը յաջողութեամբ պսակուած Նկատելով, կը շարունակեն թէ՛ «Անթիլիասի կիլիկեան կաթողիկոսարանը և դպրեվանքը գէպի քայքայում կ'առաջնորդուին, գէպի անխուսափելի քայքայում» («Արեւելք», 17-5-49) և թէ՛ «կիլիկեան Աթուր վարկարեկ հաստատութիւն մըն է» («Արեւելք», 18-5-49):

Ճշմարտութիւնները և իրական փաստերը հաճելի չեն տնոնց: Եւ, օտարէն ներշնչուած, քաղաքական ազգադաւ հաշիւներով առաջնորդուած, տաեւութեան կիրքով, ազգային գիրքերուն ու տթուներուն բռնատիրեւ մոլուցքով կուրացած, անոնք լծուած են «գործի»...:

ԿԸ ԶՐՊԱՐՏԵՆ, ԿԸ ՄԱՏՆԵՆ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՅ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՅԻՆ
ԵՒ ԿԸ ՎՏԱՆԳԵՆ ՍՓԻՒՌՅԱՀԱՅՈՒԹԻՒՆԸ



Ի տես օտարահպատակ և պատերազմական ոճրագործ հայրենադաւ Դրօներու, կոմսերու (վահան փափաղեան) և իրենց նմաններուն արուած պետական անդլօ—սմբելեան պաշտպանութեանց և քաջաւերութեան, և ի տես ոստիկանութեանց իրենց տուած ուղղակի և առօրեայ աջակցութեանց, և օգտուելով դեմոկրատական ուղատութեանց բացակայութենէն, դաշնակցական մամուլն ու օրուայ ղեկավարները անչափ ու անսահմանօրէն լրբացած են: Անոնք չեն քաշուիր իրենց հաւատացողները սնուցանելու այն ճեճճիմներով թէ՛ «մօտ է գարուն»ը «շուտով կը վերագրաւեն Հայաստանը» ամերիկեան աթոմական ռուբերով ու

թրքական սուլթաններով... Միշտ ալ կարճ յիշողութեան տէր այ ծիծաղելիները չատ շուտ մոռցած են իրենց ստացած դասերը նոյն երազով ճամբայ ելած Հիտլէրին անփառունակ վախճանը և աթոմական ռումբերու շանթաժին սնանկութիւնը:

Արդարեւ, տակաւին քանի մը ամիս առաջ. Պէյրութի մէջ դաշնակցական երեսփոխան—ղեկավար մը և թերթի տնօրէն «նոր կուսակցական» մը, պաշտօնական «բանակցութեանց» ընթացքին յայտարարած էին.— «այժմ կացութիւնը նպաստաւոր է. ուղածնիս կրնանք րնել. եւ ամեն միջոցի պիտի դիմենք՝ Կրաւելու համար կիլիկիոյ Կաթողիկոսարանը եւ Առաջնորդարանը»: Եւ իրենց «դիմած» առաջին գլխաւոր միջոցներն են զրպարտել, մատնել, յաջս տեղական իշխանութեանց կասկածելի դարձնել Հայաստանեայց եկեղեցին իր կաթողիկոսներով և իրենց չժողովող ամէն աստիճանի եկեղեցականներով, և ամբողջ հայրենասէր հայութիւնը անխտիր: Իր նշանաւոր «Թուղթ Հովուական»ին մէջ, 1947 թ.ին, կարտ. Աղաճանեան արդէն կարգախօսը տուած էր այս մասին Հայաստանեայց եկեղեցիի բաժնարարական պետերո հռչակելով՝ «սովետական գործակալներ և քաղաքականօրէն կասկածելիներ» (էջ՝ 8): Գաշնակցական խմբագիրներն ու ղեկավարները կարողնալ Աղաճանեանի կարգախօսին դրօշակակիրները դարձած են՝ Հայաստանեայց եկեղեցիին և հայրենասէր հաւատացեալ հայութեան գէմ:

Հակառակ անոր, որ Հայաստանեայց եկեղեցին, իր էջմիածնի և կիլիկիոյ Հայրապետական Աթոռներով, այս Աթոռներուն հաւատարիմ թեմերու եկեղեցականներով և բովանդակ Սփիւռքի հայրենասէր հայութեամբ, վատ թէ լաւ օրերուն, մինչեւ վերջ չէ դադրած տալէ իր տպրած նրկիրներուն հանդէպ անկասկածելի հաւատարմութեան լաւագոյն փաստերը:

Հակառակ այն անհերքելի իրողութեան, թէ իր Լիբանան ժամանման առաջին վայրկեանին իսկ, կիլիկիոյ կաթողիկոսին անփոփոխ ուղղութիւնն եղած է բացօրէն հաւատարմութիւն հանդէպ Լիբանանի և Սուրիոյ ու անոնց պետական օրէնքներուն և այդ սգիով ալ դատարարական է իր հօտը,

Հակառակ անոր, որ կիլիկեան Աթոռի Գահակալ՝ Վահագն Գարեգին Ա. կաթողիկոսն էր որ 1945 թ.ի Մայիսի նախօրեակին մերժեց ու խտառոյնս դատապարտեց Հալէպի և Լիբանանի երկու դաշնակ երեսփոխաններու այն հակապետական առաջարկները, որոնք կը ձգտէին օտար պետութեանց հաշտոյն հայութիւնը արիւնոտ արկածախնդրութեան մէջ նետել՝ Սուրիոյ և Լիբանանի ազգ.

նորակազմ կառավարութեանց դէմ,

Հակառակ անոր, որ Կիլիկիոյ այժմու կաթողիկոսն էր որ, 1945 թ.ի քաղաքական անցուդարձերուն ընթացքին վճռականապէս կեցուէ Լիբանանի և Սուրիոյ ազգային անկախութեանց կողքին և մերժեց գործակցիլ այդ անկախութեանց դէմ ուղղուած դաւերուն, որոնք նախաձեռնուած էին կարգ մը կաթոլիկ եկեղեցականներու կողմէ՝ Վատիկանի անմիջական ներշնչման տակ,

Հակառակ անոր, որ Էջմիածնի Վեհափառ Հայրապետը, 1945 թ.ին, հաւատարմութեան նոյն ուղղութեան յորդորը փոխանցած էր Սուրիոյ և Լիբանանի հայութեան, իր յատուկ պառգամաւորով՝ Էջմիածնի եկեղեցական Գերագոյն Խորհուրդի անդամ փոփֆէսէօր Աշոտ Արքայամենի միջոցով,

Հակառակ անոր, որ տակաւին 1949ի սեմին, իր «Ամենօրեայ ողջոյնի և հայրապետական յորդորի կոնդակ»ին մէջ, Էջմիածնի Աթոռի Ծայրագոյն Պատրիարք և կաթողիկոս Ամենայն հայոց Դէորդ Չ. Չէօրէքճեան Վեհափառ իր հաւատացեալ հօտին, ի մէջ այլոց բառացիօրէն պառգամած էր թէ՛ «իմչպես միշտ անցեալում. յարգեցեք հիւրընկալ երկրների անձեռնմխելիութիւնն ու պէտական անկախութիւնը, եղբայրաբար եւ սիրով ապրեցեք ձեզ համակից ու հարեւան ժողովուրդների հետ: Յարգեցեք հիւրընկալ ժողովուրդների ազգային սրբազան իրաւունքները: Մի լիցի՛մ անպատեհութեւն գործիք օտարների դիւային դաւերի: Ազնուաբար եւ բարեկեցալ սոկացեք ձեր առժամեայ իջեւաններում»,

Հակառակ անոր, որ բոլոր այս ճշմարտութիւններուն, ինչպէս ամէն հայ, նոյնպէս և դաշնակցական մամուլն ու ղեկավարները լուստեղեակ են, և սակայն դժբախտաբար անոնք չեն վարանած, վայրկեան մ'իսկ չեն խզահարուած Հայաստանայց եկեղիին և հաւատացեալ հայրենասէր հայութեան դէմ զրպարտութիւններ և մատնութիւններ ընելու:

Հալէպ լոյս տեսնող դաշնակցական «Արեւելք» օրաթերթը, իր 21--1--1949 թ.ի խմբագրական երկարապատում յօդուածին մէջ և «Մ.» ստորագրութեան տակ (X) գրած է. —

(X) «Մ.» ստորագրութեան տակ ծածկուողը նոյն թերթի խմբագրապետ Մինաս Թէօէօկեանն է. որուն ժամին 1939 թ.ին «Թուրք առ Բիւզանդացիս» գրքին մէջ՝ Հրաչ Քաջաբենց գրած էր հետեւեալները. —

«Ժանտատենդ փոխադրող այն ճանճը՝ որ կը կոչուի Մինաս

Թէօլէօլեան...» (էջ՝ 10):

«Միհս'ս, դուք այն արարածներէն էք, որ Բանկալթիի հայոց դարաւոր գերեզմանատան մէջ հոյ ճարակ ըրիք, Թրանց Վերֆելի (Մուսատաղի) գիւցազներգութիւնը, խարոյկին շուրջ պարելով, երգելով, և պառկելէ առաջ գինովնալով: Դուք այն արարածն էք որ երէկ ուրաջաք Ալիշաններն ու Պէշիկթաշլեանները: Այսօր կ'ուրանանք մեր նոր գրողները (հայ ժողովուրդի ներկայ պահապանները), և վաղը պիտի ուրանաք ձեր ազգը», (էջ՝ 32):

«Ճշմարիտ սանդձագործողները իրենց հոգին չեն ծախեր ո՛չ օղիով, ո՛չ արծաթով, ոչ-բարեկամ արժանաւորները չեն պարտաւեր, ու բարեկամ անարժանները չեն գովեր, մինչդեռ Մ.Թէօլէօլեան օղիով, արծաթով, ու թերեւս ուրիշ բաներով կը գովէ իր գրական արժանիք չունեցող «բարեկամ»ները, և կը պարտաւէ արժանաւոր ոչ-բարեկամները, ժառանգ աշուղ թէ ի վիճակի է ծախելու ո՛չ միայն իր հոգին, այլ ինքզինք, ամբողջովին», (էջ՝ 39):

«Էջմիածինը հյու-հպասակ ԳՐԱՍԵՆԵԱԿ ՄԸՆ Է ՉԵԿԱՅԻ ՉԵՌՔԻՆ ՏԱԿ: Ամենայն Հայոց Հայրապետ ոչ այլ ինչ է՝ քան պատեհաբար մը Չեկալի, — միշտ «ԵԿԵՂԵՑԱԿԱՆ»-ի վեղարով. շուրջառով ու լանջախաչով...»: (Մէջբերումներու կրկնակի ընդգրծումները կատարուած են «Արեւելք»-ի կողմէ):

Իսկ միայն Միհսս Թէօլէօլեանը չէ զրպարտիչն ու մատնիչը:

Էջմիածնի Վահափառին վերեւ յիշուած «Ամանօրեայ ողջոյնի և յողորրի կոնդակ»ին մասին խօսելով Սիմոն Վրացեան կը գրէ. —

«Ձեր «Ամանօրեայ ողջոյն»ը բոլեւիկեան քուլիկ է եւ ոչ թէ հայրապետական կոնդակ», «Արեւելք», 9—1—1949, «բաց նամակ» Էջմիածնի Ամենայն Հայոց Հայրապետ Վահ. Գեորգ Զ. Չօրէօք-ճեանին»):

Աւելցնենք որ այս նոյն բաց նամակին մէջ, Սիմոն Վրացեան լորձնաշուրթն կը փառաբանէ և Հայաստանեայց Եկեղեցիին դէմ կը պաշտպանէ կարտինալ Աղաճանեանը:

Ապա նոյն թերթի 27—4—1949 թ.ի նոյն բաժնին մէջ, այս անգամ կիլիկեան Աթուրի Հայրապետին դէմ գրուած է. —

«Հա՞րկ է անպայման ՄՈՒՐՃՆ ՈՒ ՄԱՆԳԱՂԸ գերադասել խաչին, հաւասարիմ մնացած քլալու հասար կիլիկեան Գահակալին»:

Նոյն թերթի 4—5—1949 թ.ի առաջնորդող յօդուածին մէջ

ալ, այս անգամ թեմերու առաջնորդներուն համար կը կարգանք:—

«Որպէս «կաթողիկոսական պատուիրակներ», Արսաւագղ Արեւայիսկոպոս Սիւրմեեան եւ իւր նմանները, Գրանսայէն մինչեւ Իրան կը ծառայեն Չեկային եւ Կոմիճիօրմին...»:

Իսկ, դաշնակ ղեկավար ատամնարոյժ Ատուր Գապագեան, Հ.Մ.Ը.Մ.ի տարեգարձին առթիւ Հալէպի մէջ սարքուած հաւաքոյթին, պետական և այլ սաար հիւրերու, ոստիկանապետի ներկայութեան, Կիլիկիոյ կաթողիկոսի մատին կը յայտարարէր. —

«Ունիմք կաթողիկոս մը՝ որ Հայ ժողովուրդին կաթողիկոսութիւնը չե որ կ'ընէ...», («Արեւելք», 20—3—1949)։

Դաշնակ մամուլը «Չեկայի գործակալ» հոգակած էր նաեւ իջմիածնի Ամենայն Հայոց լուսահոգի հայրապետ իորէն Ա. Մուրատպեգեանը՝ երբ Ան ողջ էր: Իսկ զայն «Չեկայի կողմէ խեղդամահ եղած հայրենասէր» յայտարարեց երբ Ան, իր բնական մահով — 82 ամեայ տարիքին — վախճանեցաւ:

«Չեկայի գործակալ» հոգակած էին Կիլիկիոյ աթոռակից կաթողիկոս լուսահոգի Բարգէն Վեհափառը:

Կը զրպարտեն և կը մատնեն ոչ միայն մամուլի և բեմերու վրայ, այլ նաեւ ոստիկանութեան տրուած գաղտնի տեղեկագիրներով:

Արդարեւ, իր կոչումին հաւատարիմ ո՞ր հայ եկեղեցականը, ո՞ր հայրենասէր հայը դաշնակցական մատնիչներու կողմէ իրեն դէմ տրուած գաղտնի տեղեկագիրներ չունի ոստիկանութեան մօտ:

Ոչ միայն կը մատնեն, այլ նաեւ զրպարտութեանց վրայ հիմնուած իրենց մատնութիւնները հաստատելու համար չինձու «փաստաթուղթեր» կը հայթայթեն ոստիկանութեան: Այսպէս, ոստիկանութեան մօտ որպէս «պուլչեւիկ» ամբաստանելէ վերջ Աղեքսանդրիոյ առաջնորդական փոխանորդ Թումանյան վարդապետը և Իւրանի թեմի Առաջնորդ Դրամբեան սրբազանը, դաշնակցական մատնիչները ուրիշ դաւի մըն ալ դիմած էին: Իրենց կողմէ կանխապատրաստուած և զանազան երկիրներէն նամակատուներ ձգած էին մատնուած եկեղեցականներու հասցէին ուղղուած չինձու նամակներ, որոնք «կը փաստէին» այդ երկու եկեղեցականներուն «պուլչեւիկեան գործակալներ» ըլլալը...:

Ահա թէ ինչպէս կը զրպարտեն, կը մատնեն, «Չեկայի գործակալներ», «սովետական գործակալներ», «պուլչեւիկեան գործա-

կալներ», «կոմիւնիստների գործակալներ» կը ներկայացնեն դաշնակցութենէն դուրս ամբողջ սփիւռքահայութիւնը, իր կաթողիկոսներով և այլ աստիճանի եկեղեցականներով: Ահա թէ ո՞վ և ի՞նչ պէս կասկածելի կը դարձնէ անոր ազգային ապահովութիւնը՝ ընդհանրօրէն մէջ:

Կ'ԱՆԱՐԳԵՆ ՈՒ ԿԸ ՎԱՐԿԱՔԵԿԵՆ ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԵԿԵՂԵՑԻՒՆ
ԾԱՌԱՅՈՂՆԵՐԸ ԵՒ ԿԸ ՓԱՌԱՔԱՆԵՆ ՎԱՏԻԿԱՆԻ ՍՊԱՍԱՌՈՐՆԵՐԸ

Տաքէք դաշնակցական մամուլը՝ վերէն արուած որպէս ընդհանուր կարգախօս, հոն կը տեսնէք մշտական փառաբանութիւնը կարաինալ Ազաճանեաններուն, մինչեւ իսկ այլազգի կարաինալներ՝ Սփիւմաններուն, հայրենազաւ Մինցենալներուն, չիւացի, ճարոնացի, քորէացի և այլ վատիկանի սպասաւորներուն. հոն պատուոյ տեղ կը արուի կարաինալական կոնդակներուն, նկարներուն, ճառերուն, յօդուածներուն, և ... մեծագումար տուար վճարող թայփլայնի փառաբանութիւններուն: Սակայն միեւնոյն տան, այդ մամուլը մաղձ ու տիղմ կը ժայթքէ հայ ազգ. եկեղեցիին դոյզ կաթողիկոսներուն, քոճարաստիճան եկեղեցականներուն, Հայ եկեղեցիի կեդրոնական հաստատութիւններուն դէմ: Թշմամական չարախօսութեամբ, նենգամիտ խեղադիւրումներով, թունաւոր տակուլութեամբ կ'ընդունուին Հայ ազգային եկեղեցիին կաթողիկոսական կոնդակներն ու ճառերը:

Ահա թէ ի՞նչ դրած էր Հալէպի «Արեւելք»ը, իր 16—11—1947 թ. խմբագրականին, և ապա, վերոյիշեալ իր 19—3—1949 թ. խմբագրականին մէջ՝ Մինաս Թէօլէօլեանի ստորագրութեան տակ. —

«Երուսաղեմէն մինչեւ Անթիպիաս, Պոլսէն մինչեւ Միացեալ—Նաոանգներ, հանգրուանէ հանգրուան հայ եկեղեցականութիւնը կը դիմէ դէպի այլասերում, դէպի աշխարհիկ բարեբաւ ունակութիւն, դէպի բացարձակ ինքնաձիւնդ: Մշակուելու, զարգացալու, հմտութիւն ամբարելու երբեմնի անյաղուրդ պապակին յաջորդած է արքայութիւնը, դիւք գրաւելու, հայ եկեղեցին լուսայափոխելու քան մը վերածելու պալատարկելի ախորժակը»:

Կիւրիկոս ժողովրդանուէր կաթողիկոսը կ'որակեն միապետ,

բռնապետ, կամապետ, անձնասուր դարձած՝ որոշ նախապաշարումներու. որոշ փախկներու («Արեւելք», 17 և 21—5—1949):

Կաթողիկոսին հիացողները կը հռչակուին «վաճեալ ամբողջ բանակը», («Արեւելք», 21—3—1949):

«Յօլարձակ նեմարսութիւն» («Արեւելք», 21—5—1949) կը հըռչակուի՝ դաշնակ հաւաքոյթի մը ընթացքին յուշուած ու պարտադրուած և կիլիկեան Աթուռի վեհափառին դէմ ուղղուած անպատուաբեր ելոյթ մը, զոր ունեցած է «դաշնակցութեան կամքով» յառաջիկային «կաթողիկոս» դառնալու փառասիրութեան չարամիտ շոյանքէն մոլորած, տկարակամ Զարեհ կաթիկոսը: (*)

Այժմ ընթերցողին կը մնայ որոշել թէ իրական աշխատածները և լուծադատութիւնները որո՞նք են, հայ ազգային եկեղեցիին բարձրաստիճան անբասիր եկեղեցականները, թէ Թաիլայններու տոլարներով սնանող ու դիրք ճշգրտ դաշնակ «հրապարակագիր»ները...

ԿԸ ԴԵՒԱԴՐԵՆ ԱՆԹԻԼԻԱՍԻ ՎԱՆՔԷՆ ՆԵՐՍ

Դաշնակները, յատուկ ծրագրով մը, կազմակերպուած դաւադրական աշխատանք կը տանին Անթիլիասի վանքէն ներս՝ կիլիկեան կաթողիկոսութեան Աթուռին դէմ, Կուսակցական դադանի որոշումով ներածուած քանի մը սարկաւադներու և ուսանողներու դաշնակցական կորիզ մը կը գործէ վանքէն ներս: Յաւալի է հաստատել, որ այդ կորիզին ղեկավար ըլլալու է ի քաջուիր պատասխանատու պաշտօն ունեցող երիտասարդ եկեղեցական մը, որ,

(*) Տեղին է յիշել, որ երուսողէմի վարդապետներէն մէկուն իրենց գրած նամակներուն մէջ, Անդրանիկ Մարտիկեան և Միսոս Թէօլեօրեան Զարեհ կաթիկոսը ներկայացուցած էին որպէս տկար մտքով ու տկար կամքով և «իրենց խօսքէն դուրս չելլող» մէկը:

Աւելցնենք նաեւ, որ դաշնակ ղեկավարներու պահանջով, վերջերս Զարեհ կաթիկոսոս Հալէպի մէջ սկսած էր իշխանութեանց մօտ որպէս «պոլլեւիկ» մասնաճիւղ հնչական, ռամկավար, անկուսակցական, բարեգործականի անդամ հայրենասէր հայերը:

դժբախտաբար, փառքերու հասնելու իր բնական տենջանքին մէջ, կը հետեւի մոլոր ճամբաներու և փաստօրէն կոթը դարձած է իր նստած ճիւղը հարուածող թռնաւոր և օտարամուտ կապինին:

Դուրսէն տրուած հրահանգներու համաձայն, այս կորիզը քայքայիչ աշխատանք կը տանի վանքէն ներս և լրակատան ծառայութիւններ կը մատուցանէ վանքի արտաքին թշնամիներուն, արուեստական գրգռութիւններ կը ստեղծեն, վարկաբեկիչ, խափանարարական և պտտակտիչ աշխատանք կը տանին վանքէն ներս, ի մեծ ուրախութիւն հայ ազգային եկեղեցիին և Կիլիկեան Աթոռի թշնամիներուն: Այդ կորիզը կ'ստնակոխէ ամէն սրբութիւն վանքէն ներս: Թռնաւոր և ջղայնոտ մթնոլորտ կը ստեղծէ հոն, յատկապէս վեհափառին շուրջ: Ամէն միջոցի կը դիմէ ջղային սպառման ենթարկելու համար ձերուհազարգ Հայրապետը: Ան կը դառնայ հայրասպան դործիքը անոնց, որոնք կ'ուզեն ջղասպառումի ենթարկել վեհափառը և փութացնել Աթոռին համար այն չարաղէտ օրը, երբ կարելի պիտի ըլլար, քաղաքական կարգ մը պղտոր և անցողական երեւոյթներէն օգուտ քողելով, Կիլիկեան Աթոռին վրայ բազմեցնել՝ Զարեհ Փայասլեանի պէս մէկը: Այդ նոյն միտքը վերջերս արդէն չնականօրէն արտայայտած էր դաշնակ զեկավար մը, որ դպրոցի տնօրէն ալ է և ցարգ ճանչցուած էր «չափաւոր մը»...

ԽԱՓԱՆԱՐԱՐՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՀԱՅԵԿՈՒՄԻ Կ'ԵՆԹԱՐԿԵՆ ԱԶԳ. ԺՈՂՎԵՐԸ, ՈՍՏԻԿԱՆՈՒԹԵԱՆ ԱԶԱԿՑՈՒԹԵԱՄԲ ԵԿԵՂԵՅԻ ԿԸ ԳՐԱԻՆ, Կ'ՈՏԵԱԿՈՒՆ ԱԶԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ Կ'ԱՄԲԱՍՏԱՆԵՆ ՈՒՐԻՇՆԵՐԸ

Դաշնակցական մամուլը սիստեմաթիք կերպով կեղծ վայնասուն կը բարձրացնէ՝ ուրիշները ամբաստանելով որպէս ազգային Սահմանադրութիւնն ու ժողովները ամբողջական մասնողներ:

Սակայն, իրականութեան մէջ, ազգային Սահմանադրութիւնն ու ժողովները միշտ ստնակոխուած, լռնութեան, քմահաճոյքին և զեղծարարութեանց տակ անչքացած, ամբողջական դատապարտուած և խափանարարութեանց ենթարկուած են միմիայն դաշնակցական զեկավարութեանց կողմէ:

Փաստերը մէջտեղ են և ազդակող:

1945 թ.ին, ամբողջութեամբ վերընարուեցաւ Լիբանանեան թեմի Ազգային Գաւառական Ժողովը: Ընտրութեանց մասնակցեցան աւելի քան 4000 քուէարկողներ: Ասիկա աննախընթաց երևուոյթ էր: 1932 թ.ին, նոյն ընտրութեանց մասնակցած էին 430 քուէարկողներ միայն: Ընտրութեանց արգիւնքն ու օրինակունութիւնը գոհունակութեամբ արձանագրուած էր Դաշնակցական «Ազգակ»-ի կողմէ: Ընտրուած 28 երեսփոխաններէն 6ը միայն կը պատկանէին Դաշնակցութեան: Բայց Դաշնակցութեան տիրապետութեան տակ կը գտնուէին կարգ մը շրջաններու թաղական խորհուրդները, որոնք ֆրանսական հովանաւորութեան շրջանին, այսօրուան պէս բռնագրաւուած էին: Անոնց ժամանակաշրջաններն ալ լրացած էին: Սահմանադրութիւնը կը պահանջէր անոնց տեղը նորերը ընտրել՝ ժողովրդական ազատ քուէարկութեամբ: Դաշնակները համոզուած էին որ ժողովրդական ազատ քուէարկութեամբ զատապարտուած էին կորսնցնելու իրենց ձեռքը գտնուած բոլոր թաղական խորհուրդներն ալ: Անոնք դիմեցին «համերաշխասիրութենէն» մինչեւ ծածուկ խափանարարութեան, թաղերու մէջ խռատփելու համար ժողովրդական ազատ ընտրութենէն: Բայց, 1947 թ.ի վերջին ամիսներէն սկսեալ, պաղեստինեան դէպքերու, քաղս. քական տրտաքին այլ ազդեակներու, անգլո-ամերիկացիներու այս երկիրներէն ներս ի գործ դրած միջամտութեանց հետեւանքով, տեղծուեցաւ քաղաքական աննպաստ կացութիւն մը: Դաշնակցական ղեկավարները անմիջապէս փոխեցին իրենց դիրքը: Գառնուկի մօրթը իրենց վրայէն նետեցին և գայլ - գաղանի կերպարանք առին: Դադրեցան «համերաշխասիրութենէ» խօսելէ եւ սկսան աջ ու ձախ տեղացնել սպառնալիքներ, իշխանութեանց մօտ քսու թիւններ կատարել: Մերժեցին ժողովի գալ՝ ձախողեցնելու համար վերընտրութիւնը ազգային քաղաքական ժողովին, որ լրացուցած էր իր, ժամանակաշրջանը:

Զինեալ արշաւանք սարքեցին Ազգ. Առաջնորդարանէն ներս՝ արգիլելու համար ազգային ժողովներու գումարումը: Զինեալ յարձակումներ կազմակերպեցին թաղերու մէջ, սարսափի մատնելու համար ժողովուրդը և յատկապէս անկուսակցական զանգուածները. ծեծի, խոշտանդումի, և դաշունահարութեան ենթարկեցին բազմաթիւ հայեր, և շուրջսկզբէնք գործածեցին անոնց դէմ:

Ապա, այս մթնոլորտին տակ և դաշնականերու անմիջական ցուցմունքներով՝ հայրենասէր հայերու դէմ սկսած պետական հեապաղուամներու և ձերբակալութիւններու պայմաններուն տակ, հակառակ Ազգ. Առաջնորդարանի հրահանգներուն, թաղերու մէջ սարքեցին ինքնակոչ, ապօրինի և զեղծուած «ընտրութիւններ», բռնագրաւելու համար թաղական խորհուրդներն ու թաղային եկեղեցիներ — ինչպէս՝ Նոր-Մարաշի, Նոր-Սիսի, Բարանթիւսայի. Հայաշէնի, Հայկաշէնի, Թրատի մէջ: Միայն Թրատ թաղի «ընտրութեանց» ընթացքին բերուած էին 40 ոստիկան-զօրքեր և 20 սիվիլ ոստիկաններ, որոնք խարազանի հարուածներով և զէնքի սպառնալիքով անարգելով կը հեռացնէին ոեւէ օրինապահ թաղեցի որ կը համարձակէր մօտենալ ընտրական գրասենեակին: Թաղեցի 650 քուէարկողներու վրայ, քուէատուփէն ելած միայն 73 քուէներով, անոնք յայտարարեցին թէ «ընտրութիւնը կատարուած է օրինաւորապէս» և բռնութեամբ գրաւեցին դպրոցն ու եկեղեցին:

1948 թ-ին, Գաւառականի դաշնակցական երեսփոխանները «ընդունեցին» նիստի մասնակցիլ «պոլշէիկներու» հետ միասին, կողք կողքի՝ Բայց այս անգամ, անոնք ժողովի կուգային ոչ թէ ազգային Սահմանադրութիւնն յարգելու, սահմանադրական կարգ ու կանոն հաստատելու, ազգային մարմիններ «ամուլութենէ» դուրս հանելու և ազգային քաղաքական ժողով վերընտրելու համար, ինչ որ սահմանադրական տարրական պահանջ մըն է՝ երբ դաւաճականո նիստ կը գումարէ իր անդամներուն բացաւրձակ մեծամասնութեամբ, այլ՝ անոնք այս անգամ ժողովի կուգային, նորածն և կարճատեւ «համերաշխասիրութեան» մը խորհրդարանութեամբ ծուղակի ձգելու և իրենց կառքին լծելու համար միամիտներն ու մանրուք շահերու շուրջ տրուած կեղծ խոստումներով խաբուողները, «օրինական» ապօրինութեամբ մը ոտնակոխել տալու համար Ազգ. Գաւառական ժողովին պարտաւորութիւնները ճշդող սահմանադրական օրէնքները, ազգային քաղաքական ժողովի մը փոխարէն «ընտրական կեդրոնական յանձնախումբ» նշանակելու համար, ինչ որ քաղաքականապէս հակառակ է Ազգային Սահմանադրութեան բացորոշ տրամադրութեանց, և ապա, մասնակի նոր «ընտրութիւններու» կատակերգութեամբ մը նենգամիտ միջոցներով ազգային մեքենային արանալու համար:

Հիւսիսային Սիւրիոյ Գաւառական ժողովին երկու շրջաններու վիճակով դադարածներուն ժամանակաշրջանները լրացած էին

ԱՆՕՐԻՆԱԿ ՇԱՆԹԱԺ ՄԸ

Դաշնակցական «հրապարակագիր»ները՝ մամուլի մէջ, իսկ ղեկավարները՝ բեմերու վրայ եւ քուլիսներու մէջ, լծուած են անօրինակ շանթածի մը:

Անոնք կ'ըսեն թէ պատիւը, ժողովրդականութիւնը, դրամը, ղեկավարելու կարողութիւնը իրենց հետ են: Կաթողիկոս, կաթողիկոսաբան, եկեղեցի եւ դպրեվանք, պատիւ, ժողովրդականութիւն, դրամ եւ ձեռնհաս ղեկավարութիւն ունենալու համար, առանց պայմանի պէտք է անձնատուր ըլլան: Իրենց ենթարկըւին, խոնարհին իրենց առջեւ, իրենց ձեռքը քաղաքական դուր-ծիքներ դառնան՝ ընդդէմ Մայր — Հայրենիքին, էջմիածնի Հայրապետական Աթոռին եւ Հայաստանեայց Եկեղեցիի միասնակա-նութեան: Երգաղթին ու հայկական դատին եւ օրհնեն հակա — հայաստանեան դաշնակոթութեւրը ռազմամու ճակատը՝ անդլօ-ամե-րիկացի յետադիմականներու մականին տակ:

Իսկ, հակառակ այս մեծխօսիկ շանթածին եւ դաշնակներու կազմակերպած բոլոր խաբսնարարութեանց, ազմկալի եւ ստոր բամբասանքներուն, Դերենիկ եպիսկոպոս մը. Կաթողիկոսին եւ Կաթողիկոսարանին անուշտոյ, երբ կը յաջողի տակաւին քսնի մը ամիս առաջ կէս միլիոն ոսկի ապահովել, այդ կը հռչակուի «մե-ծապատիւ մուրացկանութիւն» («Արեւելք», 21—5—1949): Սա-կայն երբ միւս կողմէ Լիբանանի եւ Սուրիոյ դաշնակցական օգ-նութեան խաչերը տարին 12 ամիս, հազար ու մէկ խաբբայա-կան միջոցներով, Ամերիկայէն տուար կը մուրան եւ ծերունի Լեւոն Շանթի մը կը պարտագրուի Ամերիկա երթալ, անձամբ քա-ղաքէ քաղաք, դռնէ դուռ չըջիլ տուար հայթայթելու համար Պէյրութի դաշնակցական ճեմարանին, այդ բոլորը քաւ լիցի, չեն կրնար օմեծս պատիւ մուրացկանութիւն» ըլլալ...

Իրականութեան մէջ, ոչ Կաթողիկոսն ու Կաթողիկոսարա-նը, ոչ ալ եկեղեցիներն ու առաջնորդարանները դաշնակցու-թեան պէտք ունին, այլ դաշնակցութիւնն է որ անոնց պէտք ունի՝ ժողովրդական պատիւ, հեղինակութիւն եւ դրամ ունենալու համար: Այլապէս, ինչու դաշնակցական ղեկավարները ամէն ա-նազնիւ միջոցի պիտի դիմէին բռնադրաւելու համար Կաթողի-

կոստարանն ու առաջնորդարանները:

Խօսինք փառաբերող, որոնք աւելի պերճախօս են.

1.— Անթիլիասի կաթողիկոսարանին հոյակապ տաճարը, դպրեվանքը, վեհարանը, եւայլն կառուցուած են Բարեգործականի և այլ ազգանուէր հաւատացեալ հայերու դրամով, նուիրատուութեամբ և կտակով: Դաշնակցութիւնը և անոր ենթակայ մարմինները լուծայ միակ չունեցան այդ մեծածախս շինութեանց մէջ:

2.— Անթիլիասի կաթողիկոսարանին, միաբանութեան և դպրեվանքին ծախսերը, ակիզրէն մինչեւ այսօր, հայթայթուած են Բարեգործականէն, ազգանուէր հայերու կտակներէն, յատուկ նուէրներէն, հաւատացեալ հայրենասէր հայութեան սրտաբուխ նուէրներէն և վանքապատկան կալուածներու հասոյթներէն: Դաշնակցութիւնը, իր մոլեռանդ հետեւորդները, իրեն ենթակայ մարմինները հոն լուծայ միակ բաժին չեն ունեցած:

3.— Դաշնակցութեան 10 տարուայ միահեծան տիրապետութեան շրջանէն վերջ—1941 թ.ի վերջաւորութեան—Լիբան. թեմի Ազգ. Առաջնորդարանին անտուկը կառարեւապէս դատարկ էր և սնանկ: Առաջնորդ. հօր շարաթական 15 լ. ո. վճարելու ի վիճակի չէր ան: Մասնաւորապէս սնանկութեան մէջ էին դաշնակցական տիրապետութեան ենթարկուած եկեղեցիներն ու ազգային վարժարանները: Անվճար մնացած ուսուցիչները դիմած էին ընդհանուր դասադուլի: Եւ, դաշնակցութեան ազգային իշխանութենէն հեռանալէն վերջ կազմուած ազգային նոր մարմիններն էին որ կացութիւնը փրկեցին, առաջնորդարանը անանկութենէ ազատեցին, ուսուցիչներուն վճարեցին, անոնց ռոճիկները քարձրացուցին և կարճ ժամանակի մը մ'ընթացքին ազգային անտուկին ապահովեցին 70.000 լ. ո.ի մուռք:

4.— Դամասկոսի մէջ, 1944—45 թ.ին, դաշնակցութեան մէկուկէս տարուան կարճ տիրապետութեան շրջանին, ազգային անտուկը 6000 ս. ո. պարտքի տակ մտած էր: Այդ պարտքը ամբողջութեամբ վճարուեցաւ և անտուկին մէջ դրամ աւելցաւ՝ յաջորդ. մէկ տարուան ընթացքին, դաշնակցութեան կողմէ պոյքութի ենթարկուած ազգային մարմինի մը կողմէ:

5.— Անթիլիասի կաթողիկոսարանին դէմ եղած ամենէն լիբը յոխորտանքներով,— յատկապէս Հալէպի դաշնակ ղեկավարներուն կողմէ — կը սպառնան Հալէպի մէջ հաստատել հակաթոռ. մը, անոր վրայ բազմեցնել Զարեհ եպիսկոպոս ֆայասլեանը, և

«Բարոյական նիւթական պայքարով» «Խեղդամահ» ընել կաթողիկոսարանը:

Բայց Հալէպի մեծխօսիկ շանթաժիտները կրնա՞ն ըսել թէ մինչև հիմա քանի լուծալով մասնակցած են Անթիլիոսի կաթողիկոսարանին, միաբանութեան և դպրեմանքին ծախսերուն: Ինչո՞ւ համար միայն 6000 ս. ո. հաւաքեցին Երուսաղէմի աղէտեալներուն օգնութեան համար, երբ անդին, դաշնակցութեան պոյքոթի ենթարկած լիբանոնեան թեմը կրցած էր 20.000 լ. ո. հաւաքել և Բարեգործականը հարիւր հազարներով վճարած էր՝ նոյն նպատակին: Եթէ Հալէպի շանթաժիտները այնքա՞ն հզօր միջոցներ ունէին, ինչո՞ւ համար Գարեն—Եփէ խոճիթ—ճեմարանը կարենալ բանալու և պահպանելու համար, առաջնորդ Ջարեհ եպիսկոպոսին կիպրոս կը զրկէին՝ դրամ հաւաքելու համար: Միթէ կրնա՞ն ծածկել, որ Հալէպի սղգային առաջնորդարանին կողմէ «համերաշխութեան» շրջանին գանձուած 4000 ս. ոսկիի ազգային տուրքին դիմաց, «համերաշխութեան խղուէլէն վերջ, զուադաշնակցական սղգային իշխանութիւնը, միայն 900 ս. ոսկի կրցած էր գանձել և տնտեսական քննիչ յանձնախումբի տեղեկարար՝ դաշնակցական Տօքթ. Գասապեան պարտաւորուած էր Գաւառական Ժողովի նիստին յայտարարել, թէ «Ազգը դրամ չի տար. Որուն որ պիմեցինք մերժեց ազգային տուրք վճարել եւ անլսահոտիւն յայտնեց ազգային իշխանութեան նկատմամբ: Մենք մեզի յիսկեմք, Մինչեւ որ հնչակեանք, ռամկավարը, կոմունիստը դաշնակցականին հետ նամբայ չիցնեն, ժողովուրդը ազգային տուրք չի վճարէր՝ դրամ չի տար»: Եւ կրնա՞ն անգիտանալ, որ միեւնոյն շրջանին, դաշնակցութեան պայքոթի ենթարկած ազգային մարմինները յաջողած էին ժողովուրդէն գանձել աւելի քան 6000 լ. ո. ազգային տուրք: Հալէպի ազգային եկեղեցական հաստեմարէր կայունները ո՛չ դաշնակցութեան օրով և ոչ ալ անոր հաւաքած լուծանքով չինուած են: Գաշնակցութիւնը այս հաստեմարէր կը սպառէ միայն: Հալէպի մէջ, դաշնակցութիւնն է որ կ'ողտուի ազգային եկեղեցական սնտուկէն: Ազգ. Հայկազեան վրժ. Խմբի տնօրէնի պոչաօսին կանչեցին մէկը, որ իր անկարողութեան համար անփառունակ պայմաններու տակ պաշտօնազրկուած էր իր ընկերներուն կողմէ, Գամուսկոսի դաշնակցական «Միացեալ» վարժարանէն: Անկատարած, որ շատ ախտէր տեսարաններու ակամատես պիտի ըլլանք օր մը, երբ ազգային անկողմնակալ մարմնի մը կողմէ մանրամասն քննութեան ենթարկուին Հալէպի թեմի Ազգ. Առաջնորդա-

րանին և անոր յարակից մարմիններէն շատերուն հաշիւները :

6. — Շանթաժիշտները կը յոխորտան «Սասունցի Դաւիթ»ի թանքային զօրասիւնի և կօշիկի հանգանակութեանց արտակարգ յաջողութիւններով : Ասոր պարզ հայերէնով կ'ըսեն՝ բարոյական զեղծարարութիւն եւ անպարարութիւն : Արդարեւ, բարոյական ո՞ր իրաւունքով և իրական ո՞ր փաստի հիման վրայ, դաշնակցութիւնը իրեն կը վերագրէ այդ հանգանակութեանց յաջողութիւնները : Այդ հանգանակութիւնները կը կատարուէին էջմիածնի կաթողիկոս Գէորգ Զ. Չէօբէքճեանի կոչով և կիլիկիոյ կաթողիկոս Գարեգին Ա. Յովսէփեանց վեհափառի ակտիւ հովանաւորութեան տակ : Այդ հանգանակութիւնները կը կատարուէին օգնելու համար Սովետական Հայաստանին և Սովետական Բանակին մէջ կռուող անոր արի զաւակներուն, որոնք ռազմածականներու վրայ կ'ոչնչացնէին՝ հիալէրական բանակին մէջ կռուող հայրենադաւ դաշնակցական Դիմերու «կամաւորները» և անփառունակ ու անպատիւ փախուստի կը մատնէին դաշնակցական «հերոս» խմբապետ Դրոսերը : Այդ հանգանակութիւնները կատարուեցան երբ կարմիր Բանակը Պերլինի առջեւ էր, Պերլինի մէջ, երբ օտար յմբերխալիստները դուրս կը վաճառուէին Սուրիայէն ու Լիբանէն և անոնց ազդեցութիւնը վայրէջք կ'ապրէր այս երկիրներուն մէջ, երբ տեղի կ'ունենար էջմիածնի ազգային եկեղեցական համագումարը, կը վերաբարձուէր թրքահայ բռնադրաւեալ հոգերուն դատը, հայրենադարձի մեծ աւետիսը կը տրուէր և հայրենասիրական հզօր ալիք մը կը բարձրանար բովանդակ ըսփիւռքահայութեան մէջ : Այն ատեն, դաշնակցութիւնը կը փութար Սովետական Հայաստանի տօնին, Նոյեմբեր 29ի հաւաքոյթներուն կը մասնակցէր պաշտօնապէս, անոր բանախօսները բեմերէն կը կոչէին՝ «կեցցէ՛ Ստալին, կեցցէ՛ Սովետական Բանակը, կեցցէ՛ Սովետական Հայաստան» : Այն ատեն դաշնակցութիւնը Սիմօն Վրացեաններու բերնով երդում-պատառ կ'ըլլար թէ «երբեք թշնամի եղած չէին Սովետական Հայաստանին» : դաշնակցութեան անունով Սան-Ֆրանչիսքոյի ժողովին պաշտօնական յռադիւր կը տրուէր՝ պահանջելով «թրքահայ բռնադրաւեալ հոգերուն վերամիաւորումը Սովետական Հայաստանին» : Իրերու այս կացութեան մէջ, դաշնակցութիւնը «Սասունցի Դաւիթ»ի և կօշիկի հանգանակիչ մարմիններուն կը մասնակցէր, վեհ. Գարեգին Ա. Յովսէփեանց կաթողիկոսի հայրական հովանիին կ'ապաստուէր՝ «բարի վարույց» վկայի կ'ան տպահովելու և ազգին մէջէն բոլորովին

դուրս չնետուելու համար: Ամէն պարագայի տակ, հանդուժակու-
թեանց մասնակցողներուն անուանացանկը մէջտեղն է, և այդ
ցանկին մէջ դաշնակցութեան բաժինը ծիծաղելի է. հանրութեան
համար գաղտնիք մը չեն նաեւ հանգանակութեանց մէջ Հալէպի
դաշնակցական ղեկավարներու ծածուկ խափանարարութիւնները:

7.— Հալէպի դաշնակցական ղեկավարները կը յօխորտան
«Հ. Մ. Ը. Մ. ի դաշտին» համար հաւաքուած դումարով:
Բայց, հակառակ մամուլի անպարարութեանց, Հալէպի
մէջ ժողովուրդը դիտէ թէ ո՞վ ինչպէս և ինչ նպատակով
վճարեց այդ դումարին կարեւորագոյն մասը: Եթէ իրաւացի էր
իրենց յօխորտանքը և մաքուր ազգիւրներու վրայ հիմնուած,
ինչո՞ւ նոյն պարոնները նոյնպիսի դումար մը ցարդ չհաւաքեցին
իրենց ենթակոյ տեղւոյն ազգային սնտուկին համար:

8.— Ժիշդ է որ վերջին տարին դիտուեցան որոշ կազա-
ցումներ կաթողիկոսարանի մէկ երկու ձեռնարկներուն մէջ: Անոր
պատճառը ժողովուրդին չկամութիւնը չէր սակայն: Բացարձա-
կապէս ո՛չ: Այլ, այդ կազացումներուն միակ պատճառը կաթո-
ղիկոսարանի վարչական մեքենային մէջ գործող քողածածուկ
դաշնակցական գործակալներու անխիղճ և ուխտադրուժ խափանա-
րարութիւնն էր:

ԾՇՄԱՐՏՈՒԹԻՒՆԸ՝ «ԵՐԵՒԱՆԻ ՀԱԿԻՄ- ԿՐԾՆԱԿԱՆ ԵԼՈՅԹ»ԻՆ ՄԱՍԻՆ

⑤

Քրիստոսի Մենգեան առթիւ յանկարծ վաճնասիւն մը բարձ-
րացաւ «Արեւելք»ի, «Ազգակ»ի և քողածածուկ դաշնակցակաթողիկ
«Ազգարար»ի մէջ: Փոթորիկը շարունակեց օրերով, շաբաթնե-
րով մինչև որ անհետացաւ ժողովրդական ընդհանուր զդուանքին
տակ: Դաշնակցական մամուլն ու բեմախօսները, հրաւիրեցին կի-
լիկիոյ կաթողիկոսն ու ուփառքահայութիւնը՝ սրբազան միու-
թիւն կազմելու և կրօնական պնտերազմ յայտարարելու Երեւանի,
Մոսկուայի և Եւրոպայի բոլոր «պոլիտիկէններուն դէմ», փրկելու
համար Երեւանի ռատիօկոյանէն վատնուած Առաւելածը, Քրիստոսի
վարդապետութիւնը, կրօնն ու եկեղեցին: Օրերով, շաբաթներով,
դաշնակցական մամուլի լայնածաւալ էջերը լեցուեցան զգայա-
ցունց «մերկացումներով», Նոյն նահապետի ժամանակէն ի վեր բո-

ըոր պոլիտեխնիկներու Աստուծոյ, Քրիստոսի և կրօնի դէմ խօսած — չխօսածներով: Անգամ մը եւս հրապարակ նետուեցան այն յերեւրանքները, թէ էջմիածնի Աթոռը «Չեկայի գրասենեակ է», կաթողիկոսը «Չեկայի վեզարաւոր զործակալ», Սփիւռքի մէջ անոր հաւատացող բոլոր հաւատացեալ հայերը «Չեկայի գործակալներ կամ մեղսակիցներն են», եւ 11 տարի առաջ վախճանեալ «Չեկայի գործակալ» լուսահոգի իորէն Ա. կաթողիկոսը իրապէս «Չեկայի կողմէ խեղդամահ եղած» է: Եւ, անկարացի Միհաս Թէօքէօլեանը հրամայեց կիլիկիոյ կաթողիկոսին — «Մենք պիտի խօսինք ու ինք ՊԱՐՏԱԻՈՐ է ԽՕՍԻԼ իր ՀԵՐԹԻՆ...» (Արեւելք», 18—1—1949), վախճանեալին առիթ տուողը եղած էր Երեւանի ռադիօկայանին վերագրուած և Պէյրութի, Հալէպի, Դամասկոսի մէջ միայն ճշտուած» հետեւեալ յայտարարութիւնը. —

«Այսօր, գրամատիրական երկիրները կ'ուզեն շահագործել մտացածին երեւոյթ մը, Քրիստոսի մը ծնունդը որպէս զէնք իրենց շահերուն: Մարդկութեան, ու մանաւանդ աշխատաւոր քաղմութիւններու կեղեքիչ կրօնականները՝ չեն մոռնար այլանդակ ու չպարուած հագուստներով բնաճ գալու, և քարոզելու Սուրբ Եւ խաբեբայութեան մտացածին երեւոյթները որոնք տեղի ունեցած են 2000 տարիներ առաջ: Գիտական եւ պատմական ո՛չ մէկ նրամարտութեան հիմք, ապացուցանելու գոյութիւնը այն մտացածին հրեային, որ կոչուած է «Ասուծոյ որդի»: Եթէ այդպէս եղած է, հապա ինչո՞ւ Աստուած թոյլ տուաւ, որպէսզի խաչուի առ՝ ամենանենգ ձեւով: Չենք հաւատար, բոլորովին այլաբանակա՛ն երեւոյթ է Յարութիւնը, զոր կ'ուզեն վերագրել այս մտացածին մարդուն: Եկեղեցիներ ու տաճարներ կը կանգնեն, ծծելու համար տառապող մարդկութեան արդար աշխատանքը, չմոռնալով ծառայել նաեւ գրամատիրական երկիրներու քաղաքական շահերուն:

«Այժմ. դո՛ւք որ կոչուած էք վաղուան մարդկութեան առաջնորդները հանդիսանալու, խօսքս ձեզի է աշխատաւորնե՛ր. Մի հաւատք բնծայե՛ք ո՛չ այդ հրեայ մտացածին երեւոյթին, ո՛չ ծննդեան օրուայ նամարտութեան, եւ մանաւանդ կեղեքիչ, ու սուրբ եւ ցարեանքի ներկայացուցիչ կրօնականներուն» («Արեւելք», 18—1—1949):

Ո՛չ աւելի. ո՛չ պակաս:

Ճիշդ է որ Հայաստանի մէջ կրօնի հաւատացողներ ալ կան և հաւատացողներ ալ. ինչպէս բոլոր երկիրներու մէջ: Ինչպէս կրօնի հաւատացողներուն քաղաքացիական ազատութիւնը, նոյն-

պէս նաեւ կրօնի հաւատացողներուն քաղաքացիական ազատութիւնը, անոնց զգացումներուն յարգումը, կրօնի ծառայողներուն վերաբերեալ յարգանքը այնտեղ ապահովուած են օրէնքի խստագոյն արամադրութեամբ:

Ամենայն պատասխանատուութեամբ և վճռականօրէն կը յայտարարենք թէ Երեւանի ռատիօկայանին վերագրուած վերեւ յիշուած ելոյթը ԲԱՅԱՐԱՋԱԿԱՊԷՍ ՇԻՆՇՈՒԻ Է ՈՒ ԱՆԻՐԱԿԱՆ, և չարամտօրէն հիւսուած է դաւնակցական դեկալար ու տեսաբան Միքայէլ Վաւանդեանի «կրօն եւ գիտութիւն» («հրատարակութիւն» Հ. Յ. Գաշնակցական Ուսանողական Միութեան») գրեւն փաղուած ասաղծներով: Ահաւասիկ այդ առաջները, յիշեալ գիրքին մէջ. —

«Այո՛ — և իրաւամբ քաղաքակիրթ մարդկութեան առաջագէմ հատուածները հրատարակել են կրօնը՝ իրրեւ մասնաւոր անհատական խզճի գործ, և իրաւամբ Հ. Յ. Գաշնակցութիւնը մըտցըրել է նոյն յոգեւածը իր կուսակցական ծրագրի մէջ: Բայց նա չի մոռանում այդու հանգերձ որ՝ գիտութեան դասը կայ, ամենաբարձրը, ամենապսեմը, որից դուրս «չիք փրկութիւն», որով միայն ընթանում են դէպի ջինջ ճշմարտութիւն և դէպի ճշմարիտ քաղաքակիրթութիւն: Նա չէ մոռանում, որ կրօնը իր ժամանակակից ձեւերով, տօգմերով, սիստեմներով արձիճի պէս ծանրացած է ժողովուրդներու գիտակցութեան վրայ, խաթարելով ամենուրեք նրանց նօրմալ, բնականոն առաջխաղացութիւնը: Նա չի մոռանում, մենք չենք մոռանում նախապաշարունակների ու անապաշտութիւնների այն հակայական լեռը, որ մեր և գրացի ազգութիւնները քարշ են տալիս դարերից ի վեր մի բուլթ, ընտրուկ գիտակցութեամբ, որպէս մի տեսակ տեղծք, պատուհաս, որ շարունակ թունաւորում է նրանց մտաւորն ու բարոյականը: Նա չի մոռանում, մենք չենք մոռանում, որ կրօնը, բոլոր կրօնները, այն ոտակալի եւ նարակող ափիօնն են, որով իւխող եւ ունեւոր դասակարգերը — ազնուականութիւնը, կղերը, բուրժուազիան — յաւիտեանքն սնուցանում են ժողովրդական զանգուածներին, որպէսզի աւելի եւս բրացնեն նրանց ծառայական բնագործ, աւելի եւս կռեն նրանց ստրկական շղթաները: Այդ հաւուր պատուհասի դէմ պէտք է մաքաւել: Մաքերի և հոգիների վրայ ծանրացած այդ բռնաւոր մղձաւանջը պէտք է ցրուել...»

Առանց մտաւոր և հոգեկան ազատագրութեան՝ չը կայ ճշմարիտ քաղաքական ազատագրութիւն:

Առանց գիտական մաքրագործող դաստիարակութեան՝ չկայ

ճշմարիտ առաջդիմութիւն:

Թո՛ղ, ուրեմն, գիտութիւնը դառնայ հրապուրիչ նշանաբանը հայ նորարդորջ սերունդի:

Թո՛ղ այսուհետեւ հնչէ մեր խեղճուկ մթնոլորտի մէջ գիտական, քննադատական մտքի շեփարը, թո՛ղ նա գայ փարատելու այն գունդիկ աւանդապաշտութեան մարախսողը, որ գլխաւոր պատուանդանն է արեւելեան անշարժութեան» (էջ 5 և 6):

«Ի՞նչ են այդ աստուածները, որդ արեւր շարունակ այնքան արիւն խմեցին ու չկշտացան. ի՞նչ են այն բազմազան դաւաճանքները ու պաշտամունքները, որ տակաւին ծանրացած են ազգերի վրայ, մեր այս անբախտ աշխարհի մէջ, որ առանց այն էլ հեծում է խաւարի և ստրկութեան ճիրաններում» (էջ 10):

«Շունը տեսնում է գետնին փռած հովանոցը քամու հարւածներից օրօրուելիս... և վախեցած դէս-դէն նկատում ու հաջում է կատաղութեամբ: Նա գզում է բնագոթէն, որ մի օտար ու չար ողի մտել է իր տիրոջ հովանոցի մէջ, շարժում է այն և նա հաջում է, որպէսզի դուրս քշէ այդ անարկու ոգին: Նոյն շունը չի՝ պաշտում արդեօք իր տիրոջ, որպէս մի ամենակարող սո՛վ... և ի՞նչ է կրօնական զգացումի սկզբնապատճառը, եթէ ոչ երկիւղը: Երկիւղը՝ միացած պաշկառանքի, հիացմունքի հետ» (էջ՝ 11):

«... Եւ առաջ է գալիս միաստուածութիւնը: Երկնային միապետութիւնը կարելի է դիտել, իբրեւ անդրադարձումն երկրաւոր միապետութեան» (էջ 37):

«Եհովան Իսրայէլոց ազգային աստուածն էր: Յիսուս Նազովրեցու աստուածը՝ նոյն Եհովան է, մարդկային կերպարանքով, աւելի վերացական...» (էջ՝ 46):

«Որքա՞ն ջատագովեցին այդ կրօնը, դարերի ընթացքում, բայց և որքա՞ն նա զուրկ է ինքնուրոյնութիւնից: Այն որոշ տալիզմը, որ գոյութիւն ունի քրիստոնէական սիստեմի մէջ, — փոխառութիւն է Պարսկաստանից: Սատանան, որին Յիսուս խաւարի թագաւոր է անուանում, Պարսից Ահրիմանի ընդօրինակումն է: Բրիտոս աստուածորդին աշխարհ է եկել՝ փրկելու մարդկութիւնը խաւարի տիրապետութիւնից և յաղթահարելու սատանային: Ճիշդ նոյն հաւատալիքը՝ Պարսկաստանում. Որմիզդ, լոյսի աստուածը, վաղ թէ ուշ պիտի յաղթէ Ահրիմանին: «Տիեզերական փրկչի» գաղափարը մենք գտնում ենք դեռ բուդդայական Նիքվանայի մէջ: Երրորդութեան գաղափարը ևս հանդիպում

ենք հնդկական բրահմանիզմի և եգիպտական կրօններում և նախաքրիստոնէական փիլիսոփայութեան մէջ մասնաւորապէս Ֆիլոն անուանով հրեայ փիլիսոփայի գրուածքներում» (էջ՝ 47):

«Սիրոյ քարոզը եւս նոր չէր: Քրիստոնէութիւնից դեռ չատառաջ բուդդան քարոզել էր սէր, անձնուրացութիւն ու ողորմաստիութիւն» (էջ՝ 49):

«Միւս կողմից, պէտք է նկատել, որ քրիստոնէութեան հիմքում կան էգոիստական, եսական շարժառիթներ: Եղբայրասիրութիւն է քարոզուում ապագայ վարձատրութեան խոստումներով: Քրիստոսի հրահանգած սէրը մաքուր, անաղարտ չէ» (էջ 49—50):

«... Իսկ երբ կը գան քրիստոնէական խոնարհութիւն ու համակերպութիւն քարոզելու բռնաւորի ճանկերում դաւարուող զոհերին, — դա արդէն կը լինի յանցագործութիւն» (էջ՝ 51):

«Միաստուածութեան թէօրիական էութիւնը ոչ այլ ինչ է, բայց եթէ Քրիստոսի կամ Մարկ-Աւստոնի պաշտամունքը: Աստուծոյ յատկանիշերը — սէր, իմաստութիւն, ողորմածութիւն, եւն. — սոսկ մարդկային յատկանիշներն են: Իր սեփական եութիւնն է, որ մարդս դնում է Աստուծոյ մէջ, իր սեփական յատկանիշներն են, որոնցմով նա օժտում է «Գերագոյն էակին» (էջ՝ 52):

Որտեղ մեկնաբանութիւն աւելորդ կը նկատենք:

ԴՈՒՐԵԱՆԻ ԱՐՔ.Ի ՈՃՐԱԳՈՐԾՆԵՐԸ ՁԵՆ ԿՐՆԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՅԻՒՆ ՊԱՇՏՊԱՆՆԵՐԸ ԼԼԱԼՔ

Դաշնակցական ղեկավարները այսօր ալ, «մտերմութեան» մէջ, կը յայտարարեն թէ իրենք Աստուծոյ և կրօնի հաւատացողներ չեն, Հայաստանեայց Եկեղեցիով հետաքրքրուած են և կը հետաքրքրուին որպէս ազգապահպանման ազդակ մը, ազգային յենարան մը:

Բայց, ինչպէս ներկայիս, նոյնպէս և անցեալին մէջ, Հայաստանեայց Եկեղեցիին հանդէպ անոնց ընթացքը, հիմնականին մէջ, փաստօրէն եղած է՝ պառակտիչ, քայքայիչ և թշնամական ու անաբեկչական աքթերով լեցուն, ամէն անգամ որ ան մերժած է իր ազգային և եկեղեցական կոչումէն շեղիլ և դաշնակցական

ղեկավարներու կուսակցական և խմբակային նեղ և չատ անգամ-ներ հակապագային հաշիւներուն դործիք դառնալ:

Իրենց ներկայ ընթացքով, դաշնակցական ղեկավարները փաստօրէն կը ձգտին իջմիածնի Մայր-Աթոռէն սնջասել ըՍ-փիւռքի եկեղեցական թմարը: Սիմոն վրացեան այդ անջատումը կը պահանջէ բացէ ի բաց՝ վեհափառ Գէորգ Զ. Չէօրէքճեան կաթողիկոսին ուղղած իր «բաց նամակ»ին մէջ:

Այսպէսով, անոնք կը ձգտին ինքն իր մէջ պառակտել ըՍ-փիւռքի հաւատացեալ հայութիւնը: Անոնք կը ծրագրեն սիրոյ և միասնականութեան եկեղեցական կապերը խզել և թշնամութիւն ստեղծել իջմիածնի և կիլիկիոյ կաթողիկոսութեանց միջեւ ու կիլիկեան Աթոռը թշնամական ելոյթներու մղել իջմիածնի Ամենայն Հայոց Մայր-Աթոռին դէմ, ինչպէս որ այդ միշտ եղած էր թուրքերուն ծրագիրը՝ դարերէ ի վեր: Քանգելով անոր միասնականութիւնը, զայն պառակտելով ներքնապէս, դաշնակցական ղեկավարները փաստօրէն կը ձգտին քայքայել և տկարացնել Հայաստանեայց եկեղեցին և այսպէսով կը ծառայեն վատիկանին և Հայաստանեայց Մայր եկեղեցիին այլ թշնամիներուն:

Իսկ, անցեալին մէջ ալ, դաշնակցական ղեկավարները տարբեր ընթացք չեն ունեցած Հայկական ազգային եկեղեցիին հանդէպ:

Արդարեւ, անոնք ատենին Խրիմեան Հայրիկին սպառնացին «պաշտօնանկ» ընել զինք և իր տեղը նստեցնել «աշխարհական կաթողիկոս» մը: 1908 թ.-ին, իրենց ղինակից թուրք-իթիհատական Թալաթ, ինչպէս փաշաներու իշխանութեան յենած, Պոլսոյ մէջ փողոցային աղմկալից և անարգալից ցոյցեր սարքեցին՝ Որմանեան Պատրիարքին դէմ և զայն հաշակեցին՝ «չէրիաթ-ճի»: Պոլիս, Իզմիր և այլուր, եկեղեցիներու մէջ «բացի գոցի» (*) կռիւներ սարքեցին և արիւն թափեցին: Անոնք աղմկալից ելոյթ-

(*) «Բաց»ի կողմնակից դաշնակցական ղեկավարները կը պահանջէին եկեղեցիներու դռները «բաց» պահել՝ անոնցմէ ներս թոյլատրելու համար կուսակցական հաւաքոյթներու, ներկայացուցիչներու և պարահանդէսներու սարքումը:

«Գոց»ի կողմնակից միւս բոլոր հայերը կը պահանջէին յարգել եկեղեցիներու աւանդական օրէնքները՝ որպէս Աստուծոյ տաճարներ և աղօթալոյսեր և «գոց» պահել աբտա-եկեղեցական ձեռնարկներու առջեւ:

ներ սարքեցին եկեղեցիին և եկեղեցականներու դէմ, քարոզեցին և կիրարկեցին «ազատ սէր»ի ընտանիք քայքայող անբարոյութիւնը, առանց եկեղեցիի և եկեղեցականի, «գաշնակ դրօշին տակ» ամուսնութիւններ և մկրտութիւններ կատարեցին վանի մէջ:

Մեծանուն երգիծարան Ե. Օտեանի «Ծապլվարեան նամական»ին իրենց համար դրուած էր:

Անոնք զինեալ արշաւանք կազմակերպեցին Աղթամարի վանքին դէմ, խոշտանգեցին վանականները և վանքին հարստութիւնը կողակտեցին՝ «յեղափոխական գործի» համար: Անոնք զինեալ յարձակում գործեցին Յունաստանի Առաջնորդ ծերունազարդ և հայրենասէր Մազլըմեան Արքեպիսկոպոսին դէմ, զայն չարաչար խոշտանգեցին և մօրուքը խռզեցին:

Անոնք, կուսակցական ակումբներու մէջ սարքուած հրապարակային աղմկալի հաւաքոյթներու ընթացքին, որպէս «բռնապետ» ամբաստանեցին, անարգեցին լուսահոգի Սահակ Կաթողիկոսը և սպառնացին անոր, մամուլի մէջ անարգեցին Աթոռակից լուսահոգի Բարգէն Վահափառը, ինչպէս նաև լուսահոգի Սարաճեան Վահափառը: Ամերիկայի մէջ պառակտեցին եկեղեցին, «գաշնակցական եկեղեցիներ» հիմնեցին, գաշնակցական քահանաներով: Նիւ-Եորքի եկեղեցիին մէջ, պատարագի ընթացքին, մտագործի գանակով սպաննել տուին մեծանուն եկեղեցական և հայրենասէր Առաջնորդ Դուրեան Արքեպիսկոպոսը, և ապա ոճրագործները «ազգային սուրբեր հռչակեցին» ու փողոցներու մէջ երգել տուին՝ «Դաշոյնդ սիրեմ անծանօթ ընկեր, որ սպաննեցիր Դուրեան շունը»: Անոնք քանդիչ աշխատանք տարին Երուսաղէմի հայոց դարաւոր վանքէն ներս և պատրիարք սրբազանը մինչև պետական դատարանին առջև քաշել տուին՝ ի մեծ անպատուութիւն հայ եկեղեցոյ: Այսօր ալ անոնք անմասն չեն (*) թրքական իշխանութեանց այն խլրդային աշխատանքներուն մէջ, որոնք կը ձգտին «ընդդիմադիր շարժում» դիմակին տակ պառակտել Պոլսոյ հայութեան ազգային միասնականութիւնը և քայքայել հայ եկեղեցին, որ միակ զօրաւորագոյն ազգապահպանման յենարանը մնացած է թուրքիոյ մէջ մնացած հայ բեկոր-

(*) Այժմ ազատօրէն թուրքիա մուտք կը գործեն և հրապարակի վրայ կը ծախուին գաշնակցական թերթերը՝ յատկապէս «Արեւելք»ը, «Յոռաջ»ը, «Յուսաբեր»ը, «Ազգակ»ը: Չենք զարմանար — թրքո-գաշնակ զինակցութիւն է...

ներուհն համար:—

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀՐԶԻԳՆԵՐԸ ԿՈՒԶԵՆ
«ՏԵՐ» ԴԱՌՆԱԼ ՍՓԻՒՌՔԱՀԱՅՈՒԹԵԱՆ

Ներկայիս դաշնակցական խմբագիրներուն քարոզչութեան գլխաւոր նպատակէն է՝ իրենց ընթերցողները և ունկնդիրները համոզել, թէ «անգլո-ամերիկեան ճակատի եւ Սովետական Միութեան միջեւ պատերազմը անխուսափելի է», թէ «մօտ է գարունը ...» («Ազդակ») և «եռուով անգլո-ամերիկացիները պիտի յարձակին Սովետ. Միութեան վրայ», «մահ ու անքոր սպառնող նոր ու գաղտնի գեղեցիկ մահ»՝ Ամերիկա կրնայ անդամալուծել Ռուսիան եւ ճգմել զայն» («Արեւելք»):

Այս քարոզչութեան հեղինակներէն մին՝ Ամերիկայի Միաց. Նահանգներու պատերազմական երբեմնի նախարար Ճէյմս Ֆարլեյթը, հռաջնորդուեցաւ յիմարանոց, ուր ան իր վախճանը գտաւ անձնատպանութեան մէջ, ինքզինք վար նետելով բազմաթիւ զէնքէ՝ մօր, Սակայն, դաշնակցական խմբագիրներն ու գրիչները ամենայն լրջութեամբ տակտիկն կը շարունակեն սպասարկել Ֆարլեյթի «գործ»ին: Անոնք մեծ եռանդով կը շարունակեն պատերազմի մոլեռատիկութիւն և հրձիգութիւն ընել սփիւռքահայութեան մէջ: Երէկ, անոնց գոյութեան իմաստն էր Հիտլէրի հաշտոյն պատերազմի մոլեռատիկութիւն ու հրձիգութիւն կատարել և ապա, հիտլէրական դրօշի տակ, կռուիլ եւ Մայր-Հայրենիքի եւ իրենց երկրորդ հայրենիքներուն դէմ: Այսօր անոնք նոյն դաւաճանական գործը կը կատարեն անգլո-ամերիկացի յետադիմականներու հաշտոյն, պառակտելով Հայաստանեայց Եկեղեցին:

Դաշնակցական խմբագիրներն ու գործիչները կը յայտնեն թէ՛ «Սովետ. Միութեան դէմ մօտալուս յարձակումի պատրաստուող անգլո ամերիկացիներու ազդեցութեան գօտին մէջ վերջնականապէս մտած են Սուրբան ու Լիբանանը, արաբական միւս երկիրները, ինչպէս նաեւ Թուրքիան եւ Իրանը»։ Շղատակցութեան դուրս բուլուր հայերը, դաւաճակցութեան սիրապետութեան դուրս մնացած բուլուր ազգային հաստատութիւնները ԲԱՂԱՔԱԿԱՆՈՐԷՆ ԿԱՍԿԱԾԵԼԻՒՆԵՐ, ՍՈՎԵՏԱԿԱՆ ԴՈՐԾԱԿԱԼՆԵՐ նկատուած են յայս տեղական

ի խնամութեանց»։ «ազգը վսանգուած է», (*) «նուպէն կրիսիկական է», «Փրկո՞ւի թեւն ՄիԱյ եւթն՝ ԱՄԲՈՂԶՊԱԶԳԻՆ, ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԻՆ, ԵԿԵՂԵՅԻՆԵՐՈՒՆ, ԴՊՐՈՅՆԵՐՈՒՆ, ԵԻՆ. ԵԻՆ. ՂԵԿԸ ՄԻԱՅՆ ԴԱՇՆԱԿՅՈՒԹԵԱՒՆ ՅԱՆՁՆԵԼՆ Է»։

Իրենցմէ դուրս բոլոր հայերը, կաթողիկոսով և առաջնորդով, ունեւորով և չունեւորով, մեծով-պզտիկով, «քաղաքական կասկածելիներ» և «սովետական գործակալներ» ներկայացնելէ, և «ազգը վտանգել»է վերջ, գաշնակցական ղեկավարները հիմա ալ կը պահանջեն «ազգին ղեկ»ը իրենց յանձնել՝ որպէս «փրկութեան միակ ելք»։ Շարունակելով իրենց կրկնակիօրէն ազգագաւ գործը, անոնք փաշով ու թմբուկով «որպէս սովետական գործակալներ անդական իշխանութեանց մօտ ազգ. վտանգողներ» կը հռչակեն բոլոր այն հայերը, որոնք, հաւատարիմ իրենց ազգային պատմութեան լաւագոյն աւանդութիւններուն, կը սիրեն իրենց Մայր—Հայրենիք, կը բաղձան ներգաղթել կը փափաքին քրտնայ հողերու Հայաստանին միացումը, հաւատարիմ կը մնան իրենց Մայր Եկեղեցիին՝ Էջմիածնի եւ Կիլիկիոյ հայրապետական արքեպիսկոպոսին։

Դաշնակցութեան օրուայ ղեկավարներուն նպատակը պարզ է։ Անցեալին մէջ, անոնք միշտ խոյտառակուած, «սուերես» ելած են՝ իրենց օտար տէրերուն առջև։ Այժմ անոնք կ'ուզեն,

(Վ) Դաշնակցական ղեկավարները կը մտնան անշուշտ որ Հիսուսի գրաւման բանակին մէջ, Բարիկի փողոցներուն մէջ, գաշնակցական սուսադիրներով տողանցող Դրոյի «կամաւոր»ներն էին, որ ազգը իրապէս կը վտանգէին Ֆրանսայի մէջ։ Ֆրանսայի փարթիզաններու շարքերուն մէջ գերման ներխուժողներու դէմ կըռւտող և արիւն թափող հայրենասէր հայերն էին որ ազգը փրկեցին Ֆրանսայի մէջ։

Յունաստանի մէջ, գերման կոտորածի հաշտոյն գործող գաշնակցական ղեկավարներն էին որ ազգը իրապէս կը վտանգէին և այն փարթիզաններու շարքերուն մէջ կ'ուտող հայերն էին որ ազգը փրկեցին Յունաստանի մէջ։

Յունաստանէն զրկուած հիսուս-ֆաշիստական լրտես գաշնակցական անկարգելաւորները և անոնցմէ առաջ, այժմ չա՛տ «արաբասէր», ֆրանսական իշխանութեան սպասարկող և հակա-արաբական ելոյթներու «հերոս» գաշնա՞ղ ղեկավարներն էին որ ազգը վտանգած էին, և այսօրուայ հալածուած հայրենասէրներն էին որ ազգը կը փրկէին։

գրեւէ այս անգամ «Ճերմակերես» ելլել, «ուժով և ժողովրդական» ներկայանալ, և վերջապէս «արժէք» մը ստանալ տալարի և ստեր-լինի տէրերուն առջև: Ահա թէ ինչու անոնք ամէն միջոցի կը դիմեն՝ ՏԷՐ ու ՏԻՐԱԿԱՆ դառնալու համար սփռուքահայութեան, անոր ազգային եկեղեցական լոկոս կարեւոր հաստատութիւններուն, որպէսզի կառնեն զործադրել իրենց անգլօ-ամերիկացի տէրերուն կամքը — այն է՝ ֆաշիստական սանձարձակ ահարկութիւն դիմել հայրենասէրներու և հայրենասիրական ամէն շարժման դէմ, և ապա, պատրաստուիլ, չղթալուած սփռուքահայութեան անունով մասնակցելու և հակասովետ, հակա-խաղաղասիրական բոլոր բրտօքատիօններուն՝ վիժեցնելու համար հայրենազարծին (*) ու թրքահայ հոգերու ազատագրման դատը, և երբ ատենը գայ՝ նախ թուրքիոյ հետ միասնաբար բաժին վերցնելու համար այն նուաճողական պատերազմին մէջ, որ ուղղուած պիտի ըլլայ Սովետական Միութեան, Սովետական Հայաստանի և ժողովրդական դեմոկրատիայի երկիրներուն դէմ, և երկրորդ՝ — ու միւսնոյն ատեն — նոյնպէս բաժին ստանձնելու համար արար ժողովուրդներու ազգային ազատութեան ու անկախութեան դէմ ուղղուած ահարկչական «սպառնալիք» արթնրուն մէջ, համաձայն անգլօ-ամերիկեան յետադիմականութեան ռազմամիջոց ծրագիրներուն (**):

Եւ սակայն, դաշնակ մեծխօսիկ ղեկավարները, ինչպէս միշտ, այս անգամ եւս սխալ հաշիւներու վրայ կը հիմնեն իրենց ծրագիրները: Անոնք չա՛տ ու չա՛տ կը գերադնահատեն իրենց տէրերուն ուժը, պատերազմի միջազգային հրձիգներուն ուժը և իրենց դաւաճանական կարողութիւնը: Անոնք չա՛տ ու չա՛տ ցած կը գնահատեն խաղաղութեան և ազատութեան կողմնակիցներուն ուժը աշխարհի մէջ և մանաւանդ սփռուքահայութեան հայրենասիրութեան հրաշագործ ուժը:

Դաշնակցութեան հայրենադաւ ղեկավարներուն ճակատագիրը չի կրնար ֆարեսթալի մը ճակատագիրէն տարբեր ըլլալ...

(*) «Հայրենազարծը հայասպանութիւն է, ոճիր է», կը գրէ «Արեւելք», իր 21—1—1949 ի թիւին մէջ:

(**) Իրենց հակասովետ կատաղի գրգռութիւններով, Սուրիոյ ու Լիբանանի դաշնակ մամուլն ու բանախօսները ակներեւօրէն կը ձգտին խանգարիչ որոմներ ցանկ Սուրիոյ և Լիբանանի Սովետ. Միութեան հետ ունեցած ընդհանրոյն յարաբերութիւններուն մէջ: Այս տխուր երեւոյթին կարելի է հանդիպիլ արաբական մամուլին մէջ:

ԴԱՇՆԱԿՅՈՒԹԵԱՆ ՅԱՐՁԱԿՄԱՆ ԹԻՐԱԽԸ
ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՒՆ ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹԻՒՆՆ ՈՒ
ԽԱՂԱՂԱՍԻՐՈՒԹԻՒՆՆ Է

Այժմ, ամէն ինչ պարզ է և փաստերը անհերքելի են: Աստուածապաշտութենէ, կրօնասիրութենէ, քրիստոսասիրութենէ և եկեղեցատէր բարեպաշտութենէ (*) մղուելով չէ որ դաշնակցական ղեկավարները վերջերս Աստուծոյ, կրօնի, Քրիստոսի, եկեղեցիի եւ անդուն «մարտական պաշտպանները» դարձած են և անընդհատ կ'ազմկեն: Անոնք առաջնորդուած են պարզապէս հայրենադաւ քաղաքական անխոստովանելի հաշիւներով:

Անոնք իրենք զիրենք խայտառակուած և արժէքազրկուած կը զգան սուրբի և ստերլինի տէրերուն առջեւ, այս վերջինները կը տեսնեն թէ Հայաստանեայց եկեղեցին՝ իր զոյգ մեծանուն կաթողիկոսներով, ինչպէս անցեալին մէջ, նոյնպէս ալ այսօր կը մնայ միակամ և անսասանօրէն հաւատարիմ հայրենասէր և խաղասէր: Ահա թէ ինչու, դաշնակցական խմբագիրներուն և զործիչներուն յարձակման իսկական քիւրալը ոչ թէ «անաստուածութեան, անկրօնութեան, հակաքրիստոնէական վտանգն» է, այլ՝ Հայաստանեայց եկեղեցիին խաղաղասիրութիւնը, անոր զոյգ հայրապետներուն եւ այլ բարձրասիւնան եկեղեցականներուն հայրենասիրական անայլայլ հաւատարմութիւնը՝ հանդէպ Մայր—Հայրենիքին, հանդէպ հայրենադարձին, հանդէպ բռնագրաւեալ քրտհայ հողերու ազատագրման գահին, հանդէպ ամբողջ Սփիւռքի հայութեան ազգային ապահովութեան եւ ապագային առաջադրած մահազուրկեցնելուն եւ Սփիւռքի եւ Մայր—Հայրենիքի ժողովուրդին ազգային հայ-

(*) Դաշնակցական ղեկավարներն ու մօտիկ համակիրները ոչ միայն իրենց ցուցադրական բացակայութեամբ կը փայլէին Անթիլիասի Միլաօնօրհնէքի հանդիսութիւններուն, այլ նաեւ դռնէ դուռ ամէն աշխատանք տարին հաւատացեալները հոն չգրկելու և արտասահմանէն եկած ուխտաւորներուն ճամբորդութեան վիզան արգիլել տալու համար: Եւ սակայն, Միլաօնօրհնէքի ոչ մէկ հանդիսութիւն այնքան մեծ բազմութիւն տեսած էր Անթիլիասի մէջ:

րենասիրական միասնականութեան եւ հանդեպ անոր սեփական ազգային աւանդութեանց:

Այս ճակատին վրայ եւս տարբեր ճակատագիր չի սպասեր դաշնակցութեան դաւադիր ծրագիրներուն:

Հայ ժողովուրդը արթուն կը հսկէ: Ան պարտի արթուն հըսկել՝ յարաճուն թափով:



(Վ Ե Ր Զ)



ՎՐԻՊԱԿ



Կր խնդրուի եջ 12ի գիծեն վար սպուած տողերը վեր առ-
նել, իսկ վերինները՝ վար:

ԳՆԱ ՀԻՃՆԱՐԱՐԻ ԳԻՒՆ ԳՐԱԴ.



FL0226826

9n.

